

մանակէն ոչ երբէք կրնամ առաջ երթալ, այլ միշտ ետ ետ է գնացածս»:

— Յետախաղաց մարդկանց եւ ժողովրդոց ալ կարելի է հարցընել թէ արդեօք իրենք ի մանկութենէ ինչ արհեստի տէր են եղած:

* Կատարինէ կայսրուհին օր մը իւր թռուին, այսինքն Աղեքսանդր Փաւլովիչ մանկահասակ մեծ իշխանին հետ խօսակցութիւնը բաժ ժամանակը՝ կհարցընէ անոր թէ «Պատմութեան մէջ ո՞ր կտորը ամենէն ա-

ւելի անուշ կուգայ քեզի»: Աղեքսանդր պատասխան կուտայ թէ «Հենրիկոս Դ-ին ըրածը, որ Փարիզը պաշարած ժամանակը՝ պաշարելոց հաց կյուղարկէ»: Այս խօսքին վրայ կայսրուհին ցնծալով կհամբուրէ իւր թռունու կըսէ. «Դուն քու հպատակացդ հայր պիտի լինիս». ինչպէս որ իրօք եղաւ յետոյ Աղեքսանդր:

— Ահա այս կերպով պէտք է ծնուք եւ վարժապետք լաւ դիտեն թէ տղայոց վրայ պատմութեան ո՞ր կտորները աւելի տպաւորութիւն կընեն, եւ ըստ այնմ գուշակեն հասկընան կամ շտկեն նոցա բնաւորութիւնը:

Տ Ն Տ Ե Ս Ա Կ Ա Ն Տ Ե Ղ Ե Կ Ո Ի Թ Ի Ի Ն Ք

ձԱՆՁԵՐԸ ԶԱՐԴԵԼՈՒ ՀՆԱՐՔՆԵՐ.

ձանձերուն ամառ ատեն տուած նեղութենէն ազատելու հնարքներ շատ կան. անոնցմէ մէկ քանին այս տեղս դնեմք.

Ա. Քուսասիս ըսուած փայտք եփէ, անոր ջուրը (որ մարդկանց ամենեւին վնաս չունի, բայց ճանձերուն դէմ զօրաւոր թոյն է) տափակ ամաններու մէջ լից ու սենեկին մէջ ասդիս անդին շարէ: Ամաններուն մէջ ծծուն թուղթ ալ դիր այնպէս որ բոլորովին թաց լինի, իսկ անոնց շրթունքին վրայ քիչ մը շաքար ցանէ որ ճանձերը խաբուին ու այն ջուրը խմելու գան. խմողները իսկոյն կջարդուին:

Բ. Դղումին (խապրիսին) ջուր տերեւները ծխէ սենեկին մէջ, ճանձերը իսկոյն կմեռնին՝ թէ որ սենեկին դուռն ու պատուհանները փակ են. իսկ եթէ պատուհանները բաց են, կփախչին կերթան:

Գ. Կաթին մէջ տաքդեղ եփէ դիր, ճանձերը խմածներուն պէս կջարդուին:

Դ. Ապակիէ չափաւոր մեծութեամբ աման (պակֆա) մը առ, մէջը սապոնի ջուր լից՝ մինչեւ ամանին բերնին մօտիկ, բայց այնպէս որ ջրին երեսը փրփուր չգտնուի. յետոյ կտոր մը տունի հաց առ, մէկ երեսը մեղր քսէ, այն մեղրոտ երեսը դէպ ի վար դըրած՝ անով պանքային բերանը ամուր փակէ, հացին ալ մէջտեղէն ծակ մը բաց՝ ձկոյթ (պլիկ) մատի հաստութեամբ: Ծակաչք ճանձերը մեղրին համը առածներուն պէս՝ ետեւէ ետեւ այն ծակէն ներս կմտնեն՝ մէկզմէկ կօխկըտելով. ծակին վարի բերանը գտնուողները ջուրը կթափին, կամ թէ ներս մտածները դուրս ելնելու ճարը չեն գտներ, կընկնին ջրին մէջ ու կխղդուին:

Մաքրութեան համար պէտք է ամէն օր ամանին ջուրը փոխել, երկու երեք օրն ալ անգամ մը հացին երեսը նորէն մեղրուտել: